ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2022**թ. հունիսի 15-ին ժամը՝ 11:00-ին և 2022թ. հունիսի 30-ին ժամը՝ 11:00-ին,** ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ, **ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 4 ՀԱՍՑԵՈՒՄ**

ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ՀՀ կառավարության 09.04.2020թ. N 526-**Ա որոշմամբ լուծարվող «Հենակետ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող օտարման ենթակա գույքերը**

Հիմնական միջոցներ									
Հ/Հ	Լոտի հերթական համարը	Գույքի (լոտի) անվանումը	Քանակը	Չափման միավոր	Գույքի (լոտի) գտնվելու վայրը	Գույքի գնահատված արժեքը /ՀՀ դրամ/	Լոտի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/	Նախավճարը /ՀՀ դրամ/	Մասնակցության վճարը /ՀՀ դրամ/
1	1	Թղթի թափոնի մամլող մեքենա	1	հատ	ք.Երևան, Դավիթ Բեկի 155/1	230 000	57 500	2 875	1 888
2	2	Թուղթ կտրող մեքենա ԼՌ-4-120 , Ռուսաստան	1	հատ		1 200 000	300 000	15 000	7 950
3	3	Հարթատիպ տպագրական մեքենա ԲՊՊ-75, 1989թ.	1	հատ		700 000	175 000	8 750	4 825
4	4	Թուղթ կտրող մեքենա ՅԲՌ-70, 1980թ.	1	հատ		200 000	50 000	2 500	1 700
5	5	Թելակար մեքենա ՆՇ-6	1	հատ		800 000	200 000	10 000	5 450
6	6	Էլեկտրական զողող եռաֆազ հոսանքի ապարատ	1	հատ		80 000	20 000	1 000	1 000
7	7	Գազով եռակցման ապարատ	1	հատ		100 000	25 000	1 250	1 700
8	8	Ռոտացիոն տպագրական մեքենա Harris-15A, ԱՄՆ	1	հատ		10 000 000	2 500 000	125 000	24 950
9	9	Տպագրական մեքենա Romayor-314	1	հատ		300 000	75 000	3 750	2 325
10	10	Պատճենահան մեքենա FT-40U Ultra Plus, ԱՄՆ	1	հատ		350 000	87 500	4 375	2 638
11	11	Անկար եղ-ով գիրք կազմող մեքենա Hans Muller-899	1	հատ		5 000 000	1 250 000	62 500	21 200
12	12	Թուղթ կտրող մեքենա Maxima-70, MH 80-2, Չեխ.	1	հատ		200 000	50 000	2 500	1 700
13	13	Ստվարաթուղթ կտրող մեքենա ՏԿՌ-120, 1989թ., Ռուս-ն	1	հատ		800 000	200 000	10 000	5 450
14	14	Ոսկեզոծող մեքենա ԲՋՊ-2, 1975թ., Ռուսաստան	1	հատ		600 000	150 000	7 500	4 200
15	15	Թելակար մեքենա ԲՆՇ-6, 1988թ., Ուկրաինա	1	հատ		1 200 000	300 000	15 000	7 950
16	16	Ծալող մեքենա MBO-Binder, Գերմանիա	1	հատ		1 600 000	400 000	20 000	10 450
17	17	Ճնշագծող մեքենա ՈՒՊԲ-50U	1	հատ		150 000	37 500	1 875	1 700
18	18	Սեղան մետաղյա կյուվետաներով	1	հատ		15 000	3 750	188	500
19	19	Սեղմող մամլիչ ԲՎՌ	1	հատ		200 000	50 000	2 500	1 700
20	20	Ատամնանիվ 100 մմ	1	հատ		8 000	2 000	100	500
21	21	Սեղան մոնտաժի	1	հատ		20 000	5 000	250	500
22	22	Լամինատոր	1	հատ		25 000	6 250	313	500
23	23	Մետաղալարակար մեքենա ԲՇՊ	2	հատ		300 000	75 000	3 750	2 325
24	24	Մի սայրանի թուղթ կտրող մեքենա	1	հատ		200 000	50 000	2 500	1 700
25	25	Գծանշման մեքենա	1	հատ		15 000	3 750	188	500
26	26	Թիթեղից մետաղյա զգեստապահարան	2	հատ		20 000	5 000	250	500
27	27	Էլեկտրազոդիչ	1	հատ		2 000	500	25	500
28	28	Համակարգիչ Intel(R) GPU G2020@ 2.90GHz	1	հատ		35 000	8 750	438	500
Նյութեր									
29	29	Գոտի կաշվից 4 սմ	91	մ	ք.Երևան, Դավիթ Բեկի 155/1	45 500	11 375	569	1 000
30	30	Մետաղալար 0.6մմ	21	հատ		98 700	24 675	1 234	1 000
31	31	Թերմոսոսինձ	6	կգ		15 000	3 750	188	500
32	32	թուղթ կտրիչ	1	հատ		10 000	2 500	125	500
33	33	թուղթ կտրող սարք / Wood base cutter b4 aa-scw15	1	հատ		15 000	3 750	188	500
34	34	Թիվ խփող սարք	1	հատ		15 000	3 750	188	500
35	35	Տպագրական թիթեղ (CTCP) 0.30x724x615	12	հատ		12 000	3 000	150	500
36	36	Տպագրական թիթեղ 910-600-0.3	46	հատ		55 200	13 800	690	1 000
37	37	Տպագրական թիթեղ (CTCP) 0.15x494x370	40	հատ		14 000	3 500	175	500

* Աճուրդի կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը՝ «**Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10)**:
* **Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը (ժամը՝ 17:00-ն) մուծել են նախավճար, մասնակցության վճար և Կազմակերպչի կողմից ստացել մասնակցի վկայական (տոմս)**:
* Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:
* Յուրաքանչյուր հաջորդ լոտի աճուրդը սկսվում է նախորդ լոտի աճուրդն ավարտվելուց հետո:
* **Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցողները լոտին(լոտեր) կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում՝ զանգահարելով Ա.Այվազյանին 043-94-48-88 հեռախոսահամարով, յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 09:00-17:00 (բացառությամբ 13:00-14:00): Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում աճուրդի ներկայացված լոտի (լոտեր) որակի համար: Աճուրդում գործում է հետևյալ սկզբունքը՝ «աճուրդի մասնակիցը «տեսել-համաձայնել է»:**

Աճուրդի մասնակցության պայմանները՝

- Աճուրդին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ **սեփականության իրավունք**, ինչպես նաև սահմանված ժամկետում Կազմակերպչին են ներկայացրել **անհրաժեշտ փաստաթղթեր**:

Աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- Ֆիզիկական անձանց համար՝ նույնականացման քարտի պատճենը կամ անձնագրի պատճենը՝ հաշվառված էջով:
- Իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման վկայականի պատճենը, գրանցման համարը, կանոնադրությունը, անհրաժեշտության դեպքում՝ նաև գույք ձեռք բերելու մասին ընկերության ընդհանուր ժողովի որոշումը,
- Նախավճարի վճարումը հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար, **պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը**), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության **թիվ** 900018002171, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ **աճուրդի նախավճար**՝ պարտադիր նշելով գույքի սեփականատիրոջ անվանումը, լոտի հերթական համարը: **Նախավճարը հաղթող մասնակցի համար համարվում է գույքի վաճառքի գնի մաս և չի վերադարձվում:**
- Մասնակցության վճարումը հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար, **պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը),** մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության **թիվ 900018002981**, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ **աճուրդի մասնակցության վճար**՝ պարտադիր նշելով գույքի սեփականատիրոջ անվանումը, լոտի հերթական համարը: **Մասնակցության վճարը գույքի (լոտի) գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում:**
- Հայտատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը):
* **Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում Կազմակերպիչը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական (տոմս)**:

Աճուրդի մասնակից չհամարվող անձինք և այդ անձանց գործողությունների վարքագծի կանոները՝

- Աճուրդին կարող են ներկա գտնվել **դիտորդներ**՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճարը՝ 2000 **ՀՀ դրամ:**
- Դիտորդի տոմսերը վաճառվում են՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ում (հասցեն՝ ք.Երևան, Զաքիյան 10), իսկ աճուրդի օրը՝ Պետական գույքի կառավարման կոմիտեում ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը (հասցեն՝ ք.Երևան Տիգրան Մեծ 4):
- Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի անցկացման դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր:
- **Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:**

Աճուրդի անցկացման և աճուրդում հաղթողին որոշելու կարգը՝

- Աճուրդի մասնակիցների **անձնագրի և մասնակցի վկայական(ներ)ի** առկայությունը պարտադիր է, լիազորված անձի դեպքում՝ նաև **լիազորությունները հաստատող փաստաթղթերը**:
- Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին, ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի (տոմսի) համարին համապատասխան, տրամադրում է քարտեր:
- Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լոտի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լոտի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը:

- Աճուրդը անց է կացնում աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ (բարձրացնելով իր մասնակցության քարտը), որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման (քայլի) չափով:
- Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից:
- Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին:

- Լոտի (լոտերի) վաճառքից հետո աճուրդավարի կողմից հաղթող համարված մասնակիցը ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը և տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:

Լոտի գնի վճարման կարգը, ժամկետները և նախավճարի վերադարձման կարգը՝

- Աճուրդում գոյացած գինը, նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում, վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը, իսկ գերազանցելու դեպքում՝ արձանագրության ստորագրման օրվանից սկսած 10 օրվա ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով:

- Աճուրդում հաղթող ճանաչված անձին տրվում է վճարման հանձնարարագիր, ընդ որում նախավճարը հաշվարկվում է հաղթողի կողմից վճարման ենթակա գումարի մեջ:

- Աճուրդում հաղթող ճանաչված անձը վճարման հանձնարարագրում նշված գումարը սահմանված ժամկետում վճարում է և վճարման անդորրագիրը ներկայացնում Կազմակերպչին:

- Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում հաղթող ճանաչված անձի կողմից մուծված նախավճարը չի վերադարձվում, իսկ աճուրդը համարվում է չկայացած:

- Կազմակերպիչը աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի գրավոր դիմումի հիման վրա նախավճարը վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին:

** **Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք դիմել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10 կամ զանգահարել՝ 010**-52-63- 32, 043-06-07-16 **հեռախոսահամարներով:***

Ծանուցում.

«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 9-րդ հոդված.

1. Այն պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, ենթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լոտի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված լոտի ֆիզիկական վիճակի հետ, կամ աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նախատեսվել է փոփոխությունների հնարավորությունը:

Սույն մասով նախատեսված դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մինչև նախորդող երեք օրը կատարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխություններ և լրացումներ (այսուհետ՝ հրապարակային ծանուցման փոփոխություն) այն ձևով, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:

2. Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը չի կատարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և կարգով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:

3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

Քրեական օրենսգրքի 196 հոդված.

Հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելը, որը խոշոր վնաս է պատճառել գույքի սեփականատիրոջը, սակարկություններ կազմակերպողին, գնորդին կամ այլ տնտեսավարող սուբյեկտին՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

****Ուշադրություն՝ աճուրդի ընթացքը տեսաձայնագրվում է, դրա օրինականությունը ապահովելու նպատակով:***